# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ




*Մարզկենտրոնը՝*
ք. Վանաձոր

***Տարածաշրջանները՝***
Սպիտակ,
Ստեփանավան,
Տաշիր,
Թումանյան,
Գուգարք

***Քաղաքները՝***
Վանաձոր,
Սպիտակ,
Ստեփանավան, Ալավերդի,
Տաշիր,
Ախթալա,
Թումանյան,
Շամլուղ

| | |
|---|---|
| Տարածքը | 3789 քառ. կմ |
| ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը | 12.7 % |
| Քաղաքային համայնքներ | 8 |
| Գյուղական համայնքներ | 105 |
| Քաղաքներ | 8 |
| Գյուղեր | 122 |
| Բնակչության թվաքանակը 2011թ. հունվարի 1-ի դրությամբ | 282.1 հազ. մարդ |
| *այդ թվում՝* | |
| քաղաքային | 165.4 հազ. մարդ |
| գյուղական | 116.7 հազ. մարդ |
| ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2010թ. | 8.6 % |
| Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը | 58.6 % |
| Գյուղատնտեսական նշանակության հողեր | 251198 հա |
| այդ թվում՝ վարելահողեր | 42120 հա |

***Մարզում*** ծովի մակերևույթից բարձրագույն կետը Թեժ լեռան գագաթն է (3101մ), ամենացածրը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանը (մոտ 390 մ):

***Մարզի տնտեսության*** առաջատար ճյուղերը ***գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն են:***

***Գյուղատնտեսության*** ոլորտում առանձնանում են հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի ***արտադրությունները:***

***Մարզի*** արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, մասնավորապես՝մետաղագործական արդյունաբերություն և սննդամթերքի արտադրություն ճյուղերը :

***Մարզի*** տարածքի կենտրոնական մասով անցնում է ՀՀ գլխավոր երկաթուղին:

***Բեռնաուղևորափոխադրումները*** մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

2010թ. ՀՀ Լոռու մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն ՝ 7.3 %,
- գյուղատնտեսություն՝ 6.6 %,
- շինարարություն ՝ 3.5 %,
- մանրածախ առևտուր՝ 2.0 %,
- ծառայություններ՝ 1.8 %:

## Վանաձոր

***Վանաձոր քաղաքը*** (2010թ. տարեվերջին՝ 105.0 հազ. բնակիչ) գտնվում է Փամբակ և Բազում լեռնաշղթաների միջլեռնային գոգավորությունում, Տանձուտ և Փամբակ գետերի միախառնման վայրում, ծովի մակերևույթից 1350 մ բարձրության վրա: Հեռավորությունը Երևանից ավտոխճուղով 115 կմ է, երկաթուղով՝ 224 կմ: Քաղաքի միջով հոսում են Տանձուտ և Վանաձոր գետերը:

Երբեմնի արդյունաբերական հզորություններով հարուստ ու միաժամանակ առողջարանային կենտրոն համարվող քաղաքն այսօր փորձում է վերագտնել իր նախկին տեսքը և վերականգնել իր նախկին համբավը:

Որոշ ընդհատումներով գործում է քաղաքի ***քիմիական համալիրը:*** Քաղաքում գործում են բազմաթիվ մանր ու միջին արտադրական այլ ձեռնարկություններ, առավել քաղաքակիրթ ձև են ստանում առևտուրն ու ծառայությունների մատուցումը, տարբեր ֆինանսավորման աղբյուրների հաշվին կատարվում են բնակարանային և արդյունաբերական շինարարության աշխատանքներ:

## Սպիտակ

***Սպիտակ քաղաքը*** (2010թ. տարեվերջին՝ 15.3 հազ. բնակիչ, հեռավորությունը Երևանից 95 կմ է) գտնվում է Փամբակ գետի ափին, Երևանից 95 կմ, իսկ մարզ-կենտրոնից 20 կմ հեռավորության վրա: Զբաղեցնում է 1400 հա տարածք: Քաղաքով են անցնում Երևան–Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհին ու երկաթուղին:

***Սպիտակ քաղաքը*** մինչև 1988թ. ***արդյունաբերական*** կենտրոններից էր: Քաղաքում գործում էին հանրապետության միակ շաքարի գործարանն ու վերելակաշինական գործարանը: Ներկայումս քաղաքում գործում են փոքր ու միջին արտադրական որոշ ձեռնարկություններ, բնակչության հիմնական մասն զբաղվածությունն է գտնում գյուղատնտեսության ոլորտում:

## Ստեփանավան

***Ստեփանավան քաղաքը*** (2010թ. տարեվերջին՝ 15.8 հազ. բնակիչ) զբաղեցնում է 1666 հա տարածք, գտնվում է ծովի մակերևույթից 1375 մ. բարձրության վրա: Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհը: Ստեփանավանը գտնվում է Երևանից 139 կմ, Վանաձորից՝ 24 կմ հեռավորության վրա:

Քաղաքում գործել են արտադրական մանր ու միջին մի քանի ձեռնարկություններ, որոնք զբաղվել են սննդի, կահույքի և էլեկտրասարքերի արտադրությամբ:

## Տաշիր

***Տաշիր քաղաքը*** (2010թ. տարեվերջին՝ 8.7 հազ. բնակիչ) հիմնադրվել է 1834թ., որպես ռուսական աքսորավայր և կոչվել է Վորոնցովկա, հիմնականում ապրել են ռուսներ: 1991 թ. վերանվանվել է Տաշիր: Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ավտոճանապարհը: Տաշիր քաղաքը գտնվում է Երևանից 162 կմ, Վանաձոր քաղաքից՝ 42 կմ հեռավորության վրա:

Քաղաքում գործել են ***կաթի վերամշակմամբ*** զբաղվող մի քանի կազմակերպություններ, որոնց արտադրած կաթնամթերքը (պանիր,կարագ) լայն սպառում ունի ոչ միայն հանրապետությունում, այլև հանրապետությունից դուրս:

## Ալավերդի

***Ալավերդի քաղաքը*** (2010թ. տարեվերջին՝ 15.8 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդ գետի ափին (Երևանից 162 կմ, Վանաձորից՝ 47 կմ հեռավորության վրա): Քաղաքը ձևավորվել է պղնձաձուլական գործարանի կառուցումից հետո: Վերագործարկված պղնձաձուլական արտադրությունը գործում է նաև այսօր, որի արտադրանքը կազմել է ՀՀ Լոռու մարզի տնտեսական ցուցանիշների ծանրակշիռ մասը:

## Ախթալա

***Ախթալա քաղաքը*** (2010թ. տարեվերջին՝ 2.4 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդի ձախ ափին (Երևանից 186 կմ հեռավորության վրա), լեռնային դարավանդի վրա: Քաղաքի արդյունաբերությունը մասնագիտացած է հանքագործական արդյունաբերությունում (արտադրվում է պղնձի խտանյութ):

## Թումանյան

***Թումանյան քաղաքը*** (2010թ. տարեվերջին՝ 1.7 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդի աջ ափին (Երևանից 148 կմ, Վանաձորից՝ 42 կմ հեռավորության վրա): Հետպատերազմյան շրջանում տեղական հումքի բազայի վրա կառուցվել է հրակայուն աղյուսի գործարան, որի շուրջն էլ ձևավորվել է ներկայիս Թումանյան քաղաքը:

## Շամլուղ

***Շամլուղ քաղաքը*** (2010թ. տարեվերջին՝ 0.7 հազ. բնակիչ) գտնվում է Դեբեդ գետի ձախ ափին (Երևանից 196 կմ, Վանաձորից՝ 63 կմ հեռավորության վրա): Հայտնի է իր պղնձի, արծաթի հանքավայրերով և համարվել է հանքաշահագործման կարևորագույն կենտրոններից մեկը Հարավային Կովկասում:

**Մշտական բնակչությունն ըստ տարիքային խմբերի**
**2011թթ. հունվարի 1-ի դրությամբ**




**Մանրածախ առևտրի օբյեկտներ**

| | Քանակը | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 |
| Մանրածախ առևտրի օբյեկտներ,ընդամենը | 1169 | 1148 | 1158 | 1184 | 1142 |
| այդ թվում՝ | | | | | |
| խանութներ | 348 | 342 | 326 | 366 | 323 |
| կրպակներ | 784 | 741 | 765 | 749 | 750 |
| գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ | 4 | 4 | 2 | 2 | 2 |
| սպառողական ապրանքների շուկաներ | 4 | 4 | 4 | 4 | 3 |
| առևտրի այլ օբյեկտներ | 29 | 57 | 61 | 63 | 64 |

## Կրթական հաստատություններ

| | Քանակը | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 |
| Պետական նախադպրոցական | 56 | 53 | 53 | 55 | 57 |
| Պետական հանրակրթական | 168 | 168 | 167 | 167 | 167 |
| Ոչ պետական հանրակրթական | - | - | 1 | 1 | 1 |
| Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ | 24 | 24 | 23 | 22 | 22 |
| Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական[1] | 1 | 1 | 1 | 4 | 4 |
| Պետական միջին մասնագիտական ուսումնական | 9 | 9 | 9 | 9 | 9 |
| Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական | 3 | 2 | 2 | 2 | 2 |
| Պետական բարձրագույն ուսումնական | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| Ոչ պետական բարձրագույն ուսումնական | 3 | 2 | 2 | 2 | 2 |

## Քաղաքային համայնքներ

| Համայնքի անվանումը | Բնակավայրի անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը | |
|---|---|---|---|
| | | 2010թ. հունվարի 1-ի դրությամբ*, մարդ | 2011թ. հունվարի 1-ի դրությամբ** մարդ |
| Վանաձոր | ք. Վանաձոր | 104849 | 104998 |
| Ալավերդի | ք. Ալավերդի | 16545 | 16509 |
| | գ. Ակներ | | |
| Ախթալա | ք. Ախթալա | 2389 | 2399 |
| | գ. Առողջարանին կից | | |
| Թումանյան | ք. Թումանյան | 1847 | 1797 |
| | գ. Քոբեր կայարանի | | |
| Շամլուղ | ք. Շամլուղ | 750 | 750 |
| | գ. Ախթալա | | |
| | գ. Բենդիկ | | |
| Սպիտակ | ք. Սպիտակ | 15172 | 15255 |
| Ստեփանավան | ք. Ստեփանավան | 16196 | 16184 |
| | գ. Արմանիս | | |
| Տաշիր | ք. Տաշիր | 8647 | 8667 |

[1] Այստեղ և հետայսու՝ 2009 և 2010թթ. ցուցանիշներում ներառված են նաև այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

* *Այստեղ և հետայսու՝ ՀՀ մարզերի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ընթացիկ հաշվառմամբ:*

** *Այստեղ և հետայսու՝ ՀՀ մարզերի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող <<Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը>> պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2011թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +5.1%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:*

## Գյուղական համայնքներ

| | Համայնքի անվանումը | Բնակավայրի անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը** | |
|---|---|---|---|---|
| | | | 2010թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ | 2011թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ |
| 1 | Ագարակ | | 1204 | 1190 |
| 2 | Ազնվաձոր | | 362 | 370 |
| 3 | Աթան | | 213 | 241 |
| 4 | Ահնիձոր | | 180 | 173 |
| 5 | Ամրակից | | 528 | 530 |
| 6 | Այգեհատ | | 220 | 215 |
| 7 | Անտառամուտ | | 297 | 299 |
| 8 | Անտառաշեն | | 265 | 280 |
| 9 | Ապավեն | | 139 | 140 |
| 10 | Արդվի | | 195 | 240 |
| 11 | Արծնի | | 285 | 289 |
| 12 | Արջուտ | •Արջուտ<br>•Արջուտ կայարանին կից | 1471 | 1433 |
| 13 | Արևածագ | | 715 | 675 |
| 14 | Արևաշող | | 2800 | 2799 |
| 15 | Աքորի | | 2981 | 2987 |
| 16 | Բազում | | 1075 | 965 |
| 17 | Բլագոդարնոյե | | 234 | 227 |
| 18 | Բովաձոր | | 285 | 286 |
| 19 | Գարգառ | | 1342 | 1349 |
| 20 | Գեղասար | | 921 | 924 |
| 21 | Գյուլագարակ | | 2124 | 2214 |
| 22 | Գոգարան | | 1462 | 1469 |
| 23 | Գուգարք | | 7005 | 7012 |
| 24 | Դաշտադեմ | | 132 | 129 |
| 25 | Դարպաս | | 1976 | 1992 |
| 26 | Դեբետ | | 930 | 917 |
| 27 | Դսեղ | | 2218 | 2221 |
| 28 | Եղեգնուտ | | 858 | 875 |
| 29 | Թեղուտ | | 760 | 769 |
| 30 | Լեջան | | 955 | 1083 |
| 31 | Լեռնահովիտ | | 1323 | 1311 |
| 32 | Լեռնանցք | | 1550 | 1566 |
| 33 | Լեռնապատ | | 2283 | 2279 |
| 34 | Լեռնավան | | 1534 | 1552 |
| 35 | Լերմոնտով | | 1010 | 1013 |
| 36 | Լոռի բերդ | | 390 | 377 |
| 37 | Լորուտ | | 1088 | 1075 |
| 38 | Լուսաղբյուր | | 1311 | 1216 |
| 39 | Խնկոյան | | 365 | 298 |
| 40 | Ծաթեր | | 407 | 403 |
| 41 | Ծաղկաբեր | | 1262 | 1342 |
| 42 | Ծաղկաշատ | | 217 | 203 |
| 43 | Կաթնաղբյուր | | 994 | 987 |
| 44 | Կաթնաջուր | | 1943 | 2033 |
| 45 | Կաթնառատ | | 1021 | 1028 |
| 46 | Կաճաճկուտ | | 427 | 425 |
| 47 | Կարմիր Աղեկ | | 170 | 160 |
| 48 | Կողես | | 384 | 355 |
| 49 | Կուրթան | | 2216 | 2252 |
| 50 | Հագվի | | 496 | 501 |
| 51 | Հալավար | • Հալավար<br>•Գյուլլուդարա<br>• Հայդարլի<br>• Քիլիսա | 161 | 160 |
| 52 | Հաղպատ | | 758 | 767 |
| 53 | Հարթագյուղ | | 1348 | 1353 |
| 54 | Հոբարձ | | 823 | 824 |
| 55 | Հովնանաձոր | | 105 | 90 |
| 56 | Ձյունաշող | | 179 | 153 |

| | Համայնքի անվանումը | Բնակավայրի անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը** | |
|---|---|---|---|---|
| | | | 2010թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ | 2011թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ |
| 57 | Ձորագետ | | 271 | 265 |
| 58 | Ձորագյուղ | | 317 | 233 |
| 59 | Ձորամուտ | • Ձորամուտ<br>•Գոգավան | 296 | 296 |
| 60 | Ղուրսալ | | 576 | 534 |
| 61 | Ճոճկան | | 2112 | 2138 |
| 62 | Մարգահովիտ | | 3814 | 3824 |
| 63 | Մարց | | 644 | 639 |
| 64 | Մեդովկա | •Մեդովկա<br>•Կրուգլայա շիշկա | 455 | 505 |
| 65 | Մեծ Այրում | • Մեծ Այրում<br>• Փոքր Այրում | 945 | 986 |
| 66 | Մեծավան | | 5653 | 5692 |
| 67 | Մեծ Պառնի | | 2035 | 2060 |
| 68 | Մեղվահովիտ | • Մեղվահովիտ<br>• Նորամուտ | 269 | 275 |
| 69 | Միխայելովկա | | 662 | 661 |
| 70 | Մղարթ | | 510 | 525 |
| 71 | Յաղդան | | 103 | 97 |
| 72 | Նեղոց | | 302 | 302 |
| 73 | Նովոսելցովո | | 184 | 186 |
| 74 | Նորաշեն | | 1112 | 1157 |
| 75 | Նոր Խաչակապ | | 682 | 603 |
| 76 | Շահումյան | | 3002 | 3005 |
| 77 | Շամուտ | | 297 | 296 |
| 78 | Շենավան | | 517 | 513 |
| 79 | Շիրակամուտ | | 2580 | 2550 |
| 80 | Շնող | | 3130 | 3139 |
| 81 | Չկալով | | 148 | 186 |
| 82 | Պաղաղբյուր | | 161 | 153 |
| 83 | Պետրովկա | | 218 | 244 |
| 84 | Պրիվոլնոյե | | 1046 | 1048 |
| 85 | Պուշկինո | | 251 | 249 |
| 86 | Ջիլիզա | | 102 | 103 |
| 87 | Ջրաշեն | | 3661 | 3756 |
| 88 | Սարալանջ | | 188 | 168 |
| 89 | Սարահարթ | | 1485 | 1485 |
| 90 | Սարամեջ | | 1679 | 1730 |
| 91 | Սարատովկա | • Սարատովկա<br>• Գետավան | 483 | 483 |
| 92 | Սարչապետ | | 2100 | 2102 |
| 93 | Սվերդլով | | 1074 | 1072 |
| 94 | Վահագնաձոր | | 274 | 297 |
| 95 | Վահագնի | | 974 | 975 |
| 96 | Վարդաբլուր | | 1346 | 1379 |
| 97 | ՈՒռուտ | | 1018 | 1050 |
| 98 | ՈՒրասար | | 387 | 399 |
| 99 | Փամբակ | • Փամբակ<br>• Փամբակ կայարանին կից | 364 | 404 |
| 100 | Քարաբերդ | | 97 | 91 |
| 101 | Քարաձոր | | 443 | 505 |
| 102 | Քարինջ | | 631 | 622 |
| 103 | Քարկոփ | | 420 | 418 |
| 104 | Օձուն | •Օձուն<br>• Ամոջ | 5739 | 5812 |
| 105 | Ֆիոլետովո | | 1411 | 1403 |

ՀՀ Լոռու մարզի պայմանական 10 000 բնակիչ ունեցող սոցիալական մի շարք բնութագրիչներ, 2010թ.

| | Ընդա-մենը | *նրանցից՝* | |
|---|---|---|---|
| | | կանայք[1] | տղամարդիկ[1] |
| Բնակչությունը, մարդ | 10000 | 5150 | 4850 |
| Ծնվածներ, մարդ | 131 | 62 | 69 |
| Մահացածներ, մարդ | 104 | 50 | 54 |
| Ամուսնություններ | 50 | X | X |
| Ամուսնալուծություններ | 17 | X | X |
| Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ | 31.7 | X | X |
| Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝ | | | |
| նախադպրոցական | 124 | 59 | 65 |
| հանրակրթական | 1135 | 552 | 583 |
| երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան-ստեղծագործական կենտրոններ | 71 | 50 | 21 |
| նախնական մասնագիտական (արհեստագործական) | 17 | 3 | 14 |
| միջին մասնագիտական | 93 | 56 | 37 |
| բարձրագույն մասնագիտական | 186 | 110 | 76 |
| Առողջապահության ոլորտ՝ | | | |
| հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը) | 32043 | … | … |
| Մարզիկներ, մարդ | 119 | 17 | 102 |
| Զբաղվածներ, մարդ | 3270 | … | … |
| նրանցից՝ գիտական հիմնարկներում | - | - | - |
| նրանցից՝ գիտության դոկտոր | - | - | - |
| գիտության թեկնածուներ | - | - | - |
| ուսուցիչներ | 143 | 122 | 21 |
| բժիշկներ | 18 | … | … |
| միջին բուժանձնակազմ | 43 | … | … |
| Գործազուրկներ /պաշտոնապես գրանցված/, մարդ | 379 | 348 | 131 |
| Սոցիալական ապահովության ոլորտ | | | |
| ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ | 1850 | … | … |
| աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ | 658 | X | X |
| Հաճախումների քանակը տարվա ընթացքում | | | |
| գրադարան | 21431 | … | … |
| թատրոն | 1050 | … | … |
| համերգ | - | - | - |
| թանգարան | 668 | … | … |
| Իրավական ոլորտ | | | |
| հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում | 47 | X | X |
| այդ թվում՝ ոչ մեծ ծանրության | 26 | X | X |
| միջին ծանրության | 11 | X | X |
| ծանր | 9 | X | X |
| առանձնապես ծանր | 0.0 | X | X |

[1] *Ցուցանիշները հաշվարկային են:*